№ 140 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10 1891 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10 № 140

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՑ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովսէփ Լազարեան Փիրալեանց և Մէլքում Յովսէփեան Ամիրխանեան՝ խորին վշտով յայտնելով առաջինը իր ամուսնու, և երկրորդը իր աղջկայ՝ ՄԱՐԻԱՄ ՄԷԼՔՈՒՄԵԱՆ ՓԻՐԱԼԵԱՆԻ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին ներկայ լինել յուղարկաւորութեանը, չորեքշաբթի օր, դեկտեմբերի 11-ին, առաւօտեան 10 ժամին, իր բնակարանից, Վելիամինովսկայա փողոցի վրա, տուն Արղութեանի, № 26, դէպի Ջիզրաշէնի եկեղեցին: Հոգեհանդիստն այսօր, երեքշաբթի օր, երեկոյեան 6 ժամին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ ամեն տեսակ ընթերցանութիւն օգտաւէտ է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլգարիա. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՏԵՂԵԿԱՑՈՒՑ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք.

ՄԻԹԷ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ ՕԳՏԱՒԷՏ Է

Հայերը, որոնց մէջ ընթերցանութիւնը ամենևին զարգացած չէ, այնու ամենայնիւ սովորութիւն ունեն կրկնելու. "ամեն տեսակ ընթերցանութիւն օգտաւէտ է, ինչ գիրք կամ լրագիր ուզում ես կարդա, միայն թէ բան կարդաս...."

Դա, մեր կարծիքով, կատարելապէս սխալ կարծիք է, որ իբր թէ ամեն տեսակ ընթերցանութիւն օգտաւէտ է:

Այո՛, եթէ ընթերցանութեան վրա նայէք միմիայն լեզուի տեսակէտից, այսինքն մայրենի լեզուի տարածման, ուրեմն այդպէս ասած ազգային տեսակէտից,—այդ ուրիշ խընդիր է.... Ինչ գիրք կամ լրագիր էլ կարդայ ամբոխը, ինտելիգենցիան կամ մատաղ սերունդը, միայն թէ հայերէն սովորէ, հայոց լեզուին, հայոց ընթերցանութեանն ընտելանայ,—ահա ընթերցանութեան տարածման պաշտպանների մեծամասնութեան լոզիկան....

Սակայն մենք ուրիշ տեսակէտից ենք նայում հարցի վրա. մենք նայում ենք ընթերցանութեան վրա, որպէս առողջ, օգտաւէտ, առաջադէմ մտքեր ամբոխի մէջ սերմանող հզօր միջոցի վրա: Պարզ է, եթէ ընթերցանութիւնն ունի այդ բարոյական նպատակը, եթէ նա ունի մտաւոր առողջ զարգացմանը նպաստելու նպատակը,—այն ժամանակ ամեն տեսակ ընթերցանութիւն չէ կարող օգտաւէտ լինել, այլ այս կամ այն ընթերցանութիւնը կարող է և ֆնասակար լինել:

"Ինչ ուզում ես կարդա՛, միայն թէ բան կարդաս„, ասում են սահմանափակ գրչասները:

Ուրեմն նրանց կարծիքով կարելի է կարդալ և "պոռնկագրական„ գրքերը, քանի որ նրանք էլ շատ աջող կերպով կը զարգացնեն ընթերցանութիւնը, գուցէ աւելի քան որ և է գրուածքներ կը նպաստեն ընթերցասիրութեան զարգացմանը....

„Ինչ ուզում ես կարդա, միայն թէ բան կարդաս", կրկնում են միամիտ կարճատեսները:

Ուրեմն այդպիսիների կարծիքով օգտաւէտ է կարդալ և այնպիսի մի գիրք կամ մի լրագրական յօդուած, որի մէջ ասված է թէ եւրօպական քաղաքակրթութիւնը փտած է, ֆնասակար է, հարկաւոր չէ ձգտել դէպի լոյսը, դէպի մեր մտաւոր ու բարոյական վերանորոգութիւնը, պէտք է մնանք մեր սուրբ, հնադարեան անշարժութեան մէջ, ամեն տեսակ բարենորոգում, բարեփոխութիւն ֆնասակար, կորստաբեր է, քանի որ ամեն տեսակ բարենորոգում, բարեփոխութիւն՝ օտարամուտ է, իսկ մեր փրկութիւնն է՝ միշտ և միշտ հաւատարիմ մնալ մեր դարաւոր, քայքայվող անշարժութեանը...

„Ինչ ուզում ես կարդա, միայն թէ բան կարդաս..."

Այդ տեսակ լոզիկայով կարող ենք այնտեղ հասնել, որ կառաջարկենք ընթերցանութեան համար այնպիսի գրուածքներ, որոնց մէջ ասված կը լինի թէ ուսումը, գիտութիւնը ֆնասակար են, մատչելի լեզուով Աւետարան կարդալն էլ վտանգաւոր է: Իսկ հասարակական և տնտեսական կեանքի վերաբերմամբ այնպիսի գրուածքներ կառաջարկենք, որոնց մէջ այն միտքն է արծարծվում, թէ պէտք է ապերախտ լինել դէպի ազգային գործիչները, պէտք է անտարբեր լինել դէպի հասարակաց կեանքի առաջադիմութիւնը, պէտք է մտածել միմիայն հարստանալու և իր գրպանը լցնելու վրա, առանց միջոցների մէջ խտրութիւն դնելու... Գողացի՛ր, կողոպտի՛ր, հարստահարի՛ր,—փոյթ չէ, ամեն միջոցը լաւ է՝ նպատակին հասնելու համար...

Չէ՞ որ դա էլ տպված խօսք է, չէ որ դա էլ ընթերցանութիւն կը լինի: Ուրեմն այդ տեսակ խորհուրդներով լի ընթերցանութիւնն էլ օգտաւէ՞տ է...

Ուզում էք մի յօդուած, մի գիրք կը գըրենք, որոնց մէջ ոգեւորված կերպով կը քարոզենք այն միտքը թէ՝ պէտք է ատել լոյսը, պէտք է սիրել խաւարը, պէտք է միշտ անշարժ մնալ, պէտք է ատել նորամուտ օգտաւէտ մտքերն ու հաստատութիւնները, պէտք է անողորմ կերպով հալածել քաղաքակրթութիւնն ու առաջադիմութիւնը...

Ի՞նչ կայ... սա էլ տպագրական խօսք կը համարվի, սա էլ կը նպաստ ընթերցասիրութեանը, ուրեմն այդ էլ կարդացէք, այդ տեսակ օգտաւէտ գաղափարներով էլ ոգեւորվեցէք... Չէ՞ որ, ձեր կարծիքով, ընթերցանութիւնը օգտաւէտ է...

Ոչ, միամիտ, կարճատես և խաւարասէր պարոններ, ոչ, ամենևին տեսակ ընթերցանութիւն օգտաւէտ չէ, ամեն տեսակ տրված խօսք օգտաւէտ չէ, այլ կան աշխարհիս երեսին և ֆնասակար տպագրութիւններ, կայ և ֆնասակար, ամբոխի մտքի առողջ զարգացմանը արգելք դնող, մտաւոր և բարոյական զարգացումը խափանող, կորստաբեր ընթերցանութիւն...

Ով կարող է սկզբունքով ուրանալ դպրոցի, ուսումնարանի օգտաւէտութիւնը: Բայց միթէ՞ ամեն տեսակ ուսումնարան օգտաւէտ է. այն ուսումնարանը, որի մէջ ծեծ կայ, որի մէջ մանուկների, որպէս մարդկային արարածների, որպէս ապագայ քաղաքացիների պատասխանատուութեան զգացմունքը ոտնակոխ են անում, անդադար ջանում են ստորացնել երեխային իր սեփական աչքերում, այնտեղ են հասցնում նրան, որ նա կորցնում է ամեն տեսակ յարգանք դէպի իր անձը,—այդ տեսակ դպրոց ոչ թէ օգտաւէտ է, այլ ուղղակի ֆնասակար էլ է:

Այն ընթերցանութիւնն էլ, որը անդադար շողոքորթում է ընթերցողի մարդկային ստոր ինստինկտներին, քարոզում է նրան վայրենութիւն, փտած անշարժութիւն և ատելութիւն դէպի լոյս,—այդ տեսակ ընթերցանութիւն օգտաւէտ չէ կարող լինել, ինչքան էլ նա ընտելացնէ մարդուն տպագրական խօսքի ընթերցանութեանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բաղու, դեկտեմբերի 4-ին

«Մշակ» լրագրի 136-րդ համարի առաջնորդողը «Ո՞վ է Բաֆայել Պատկանեան», իրարանցումն պէտք է գցէ մեծ բանաստեղծի կեանքով հետաքրքրվող անձանց մէջ և տեղիք է տալու շատ աննպաստ կարծիքներ կազմելու մեր հայերիս անտարբերութեան մասին: Այո՛, անուրանալի է ձեր ասածը, թէ Պատկանեան եղել է և դեռ շատ տարիներ լինելու է մեր մատաղ սերնդի կրթողը, և նրա զգացմունքներ ազնուացնողը: Անուրանալի է և այն, որ նա մեզ, մայրերիս մէջ ներշնչել է վեհ գաղափարներ և պարտաճանաչութեան զգացմունքներ դէպի մեր զաւակները: Նա է եղել առաջինը, որ մեր մանկութիւնից սկսած իր բանաստեղծութիւններով ներշնչել է մեր մէջ այնպիսի գաղափարներ, որոնց իրագործված տեսնելը ամեն մի ճշմարիտ հայի համար կեանքի նըշանաբան պէտք է համարվի: Եւ այսօր, այդ բոլորի փոխարէն ինչով ենք մեր պարտաճանաչութեան զգացմունքը և երախտագիտութիւնը արտայայտում մեր ուսուցչին: Պատկանեան տկար է, նա չքաւոր է, մեծ ընտանիքով ծանրաբեռնված է, այդ ամենքս գիտենք, թէ չնորհիւ «Մշակ» լրագրի 136-րդ համարի մարակոզական առաջնորդողի և թէ մասնաւոր լուրերից. ամենքս ախ ու վախ կանենք, լոկ խօսքով կը ցաւենք, ի հարկէ, ըստ մեր սովորութեան, և առաւել ոչինչ: Բայց միթէ աւելի լաւ չէինք անի մենք հայուհիքս, եթէ փոխանակ մեր շռայլութեան համար հարիւրներ մխսելու, մեր գոնէ ժապաւէնների, կրուժեվանների և այլ անմիտ պաճուճանքների վրա մխած գումարը ժողովէինք մեր մէջ, և առաջարկէինք մեր ազգային ցաւերի երգիչ բանաստեղծ-վարժապետին, խնդրելով, որ այդ գումարը ծախսէր իր երեխաների կրթութեան գործի վրա: Որովհետև նա եղել է մեր ուսուցիչը, թող մենք էլ մի փոքր պարտաճանաչ լինենք, մենք էլ միջոց տանք նրան հոգալու իր երեխաների կըրթութեան համար, և ոչ թէ գցենք այն դառն դրութեան մէջ, որ ստիպված լինի դիմելու զանազան հիմնարկութիւններին և մասնաւոր անձանց բարերարութեանը:

Միթէ մեր ազգային գիտակցութեան համար պատւաբեր է այսպիսի անտարբերութիւն դէպի «Մայր Արաքսի» անմահ հեղինակը. թող մի անգամ գոնէ ցոյց տանք, որ մենք էլ այնքան ճանաչում ենք մեր պարտականութիւնները, որ կարող ենք կատարել նրանց և այդպիսով մխիթարենք ծերունի բանաստեղծի վշտացեալ սիրտը և սփոփենք նրա ցաւերը: Քաջայոյս եմ, որ թոյլ խօսքերս արձագանք կը գտնեն իմ համազգի քոյրերիս զգայուն սրտերում: Երբ Պատկանեան այստեղ, Բաղուում հիւր էր անցեալ տարի, և շատ ճոխ ճաշկերոյթներ, թէ մասնաւոր և թէ հասարակաց տրվեցան ի պատիւ նրա, ճաշի ժամանակ հանդիսականները շատ բարի ցանկութիւններ և շատ բանում պատրաստականութիւն յայտնեցին նրա պերճախօս ատենաբանութեան մէջ արծարծած գաղափարների առիթով, և հէնց այդ էր պատճառը, որ բանաստեղծը երգիծաբանութեամբ ասեց, թէ «զանազան ազգեր արբեցուցուցիչ ընպելիքների ազդեցութեան տակ, զանազան տրամադրութեան են գալիս, ես կը ցանկանայի, աւելացրեց նա, որ հայի արբած դրութիւնում եղած տրամադրութիւնը անպակաս լինի և նրա բնական ժամանակը, որովհետև հայը ըմպելիքների ազդեցութեան տակ դառնում է բարի, պատրաստական, ընկերասէր և մինչև անգամ ազգասէր»:

Վերջացնելով խօսքս, դիմում եմ ձեզ, պ. խմբագիր, խնդրելով, որ սրա հետ ուղարկած 3 ռուբլին աւելացնելով «Մշակի» խմբագրութեան կողմից նշանակած ամսական 5 ռուբլու վրա հասցնէք Պատկանեանի որդուն: Պարտաւորվում եմ, ամեն ամիս ուղարկել 3 ռուբլի նոյն ուսանող Պատկանեանի համար, ձեր հասցէով:

Հայուհի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Սամարա, նոյեմբերի 29-ին

Մի քանի ամիս սրանից առաջ ես Սոկհօլմ հրատարակվող չաբաթաթերթից մէկում տեսայ մի նամակ Շվեդիայում հանրածանօթ և խիստ վրատահելի մի մարդուց, որի մէջ պարոնը թոքախտի դէմ դեղ էր ցոյց տալիս: Քանի որ այդ տեսակ նամակներ և երկար ու ձիգ յօդուածներ ուրիշ լրագիրներում շատ էի տեսել, դեղեր, որոնք քիչ յետոյ անօգուտ երևալով իրանք իրանց ոչնչացել էին, ես սկզբից այդ բանի վրա շատ ուշադրութիւն չը դարձրի: Նրանից յետոյ ես նոյն բեցեպտը տեսայ նոյն քաղաքում հրատարակվող մի օրաթերթի մէջ: Այդ ժամանակից սկսած ես վերոյիշեալ չաբաթաթերթի մէջ պատահել եմ զանազան անձինքներից և նահանգներից գրված նամակներ, որոնց զրողները բոլորն էլ վկայել են, թէ իրանք գործ են ածել այդ դեղը և կարճ ժամանակի մէջ լաւացել: Շվեդիայում այդ նոյն դեղը նորերս մտաւ և վաճառականութեան մէջ: Եւ որովհետև

ես թէ այդ թերթերի խմբագիրների և թէ նամակը գրողի հետ անձամբ ծանօթ եմ և գիտեմ, որ նրանք բոլորն էլ պատուաւոր և ժողովրդականութիւն ստացած մարդիկ են, համարձակվում եմ այս նամակով այն դեղի ինչ լինելը ձեզ հաղորդել: Ես առաջ եմ բերում վերոյիշեալ նամակագրի խօսքերը բառ առ բառ թարգմանելով: Ահա նամակը:

«Այս ամառ, իմ ճանապարհորդութիւններից մէկի ժամանակ, ես պատահեցի մի գեղջկուհու, որին արդէն քանի տարի է ճանաչում եմ: Նա շատ հիւանդ էր եղել: Թէ գաւառական բժիշկը և թէ մէկ ուրիշ երևելի բժիշկ ասել էին, որ նա թոքախտ ունի: Երևում էր, որ կինը արագ քայլերով գերեզմանին մօտենում է: Ամեն օր սպասում էին, որ նա կը մեռնի: Այն ժամանակ նրա էրիկը տեղեկութիւն ստացաւ մի հասարակ տընային դեղի մասին: Կինը սկսեց գործ ածել այդ դեղը: Մի քանի օրից յետոյ տեղի ունեցաւ ակներև փոփոխութիւն դէպի լաւը: Էլի մի քիչ ժամանակ,— և նա արդէն կարող էր անկողինը թողնել: Երբ ես նրան պատահեցի, նա եկեղեցումն էր: Ի հարկէ, նա դեռ տկար էր, բայց բաւական առողջ,—մի հրաշք տեսնողի համար: Դրանից յետոյ նրա առողջութիւնը միշտ դէպի լաւն է գնացել: Շատերը, որոնց ես այդ դէպքը պատմել իմ, խնդրել են ինձ յայտնել հասարակութեանը այդ դեղը պատրաստելու կերպը, և ես կամենում եմ սրանով նրանց խնդիրները կատարել:»

Ահա այդ դեղը պատրաստելու եղանակը.

Մի սուպի գդալ կանեփի ծեծած սերմ են առնում և նոյնքան էլ հաճարի մաղած ալիւր: Սա մի քիչ կաթի հետ խառնում են: Յետոյ վերցնում են մի լիտր (մօտ 6 թէյի բաժակ) թարմ կաթ, եռացնում են, և, վերոյիշեալ խառնուրդը նրա մէջ ածելով, էլի մի քիչ եփում, որից յետոյ կանեփի չէջը հանում են: Օրեկան այսպէս եփածի կէսը խմում են, առաւօտեան և երեկոյեան, (ամբողջի մի քառորդը առաւօտը, միւսը երեկոյեան տաք կամ պաղ, ինչպէս հիւանդը ցանկանայ: Համը բերելու համար կարելի է մէջը քիչ աղ դցել:

Արդէն մի երկու շաբաթից յետոյ հիւանդը իրան թեթև է զգում: Խմելը շարունակվում է մի քանի ամիս, մինչև հիւանդը սկսի դէրանալ: Որքան գէրութիւնը աւելանում է, այնքան էլ հիւանդութիւնը պակասում է: Այս դեղը շատ հիւանդներ, որոնց բժիշկները քննել և անբուժելի են դտել, գործ են ածել և լաւացել:—Ինչպէս երևում է, դեղը շատ հասարակ է և անվնաս, որ երբէք չէ կարելի ասել շատ ուրիշ դեղերի նկատմամբ, և մի և նոյն ժամանակ նաև մենդարար: Այս է նամակի բովանդակութիւնը: Ցանկալի է, որ շատ հիւանդներ գործածեն այս հասարակ դեղը հաստատ մահվանից ազատվելու համար: Ցանկալի է նոյնպէս, որ Նրանք, որոնք գործ կածեն այս միջոցը և կը լաւանան, իրանց առողջանալու մասին, լրագիրների միջոցով, տեղեկութիւն տային, որ շատ ուրիշները աւելի վստահութեամբ հետևէին նրանց օրինակին:

Մ. Տ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տեղական «Тифл. Листокъ» լրագիրը, մեծացնելով իր դիրքը, մացրել է իր էջերի մէջ մի նոր բաժին, այն է «Մամուլի տեսութիւն», նպատակ ունենալով ծանօթացնել ռուս ընթերցողներին տեղական հայոց և վրաց մամուլի մէջ արծարծվող ընթացիկ խնդիրների հետ: Միջնորդ հանդիսանալ ռուս հասարակութեան և տեղական լրագրութեան մէջ,—դա ռուս լրագիրների վաղուցվայ պարտքն էր, և ուրախալի է, որ գոնէ այժմ յիշեալ լրագիրը այդ պարտքը յանձն է առնում: Մենք միայն ցանկանում ենք, որ լրագիրը իր այդ բաժինը առաջ տանի տոկունութեամբ և լայն ծաւալով:

—

Հայոց դերասանական խումբը մտադիր է ներկայացնել առաջիկայ տօներին «Սանդուխտ» պատմական ողբերգութիւնը: «Թէև այդ ողբերգութիւնը ինքն ըստ ինքեան մի գ ա տ չէ» ասում են շատերը, բայց պէտք է ներկայացնել, որովհետև լաւ մուտք կը տայ...

—

Շաբաթ, դեկտեմբերի 7-ին, կայացաւ ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ դահլիճում հայոց Հրատարակչական ընկերութեան օգտին տուած պարահանդէսը: Բաւական ժողովուրդ կար դահլիճում և պարահանդէսը բաւական կենդանի անցաւ:

—

Ներկայ թվի «Deutsche Litteraturzeitung» հրատարակութեան դեկտեմբերի 12-ի համարում գտնում ենք պրոֆէսոր Անդրէաս Արծրունու մի նկատողութիւն Վիէննայում անցեալ տարի լոյս տեսած Ֆրանց Շերէրի գրքի մասին, որը կրում է «Die Mechitharisten in Wien mit einer kurzen Skizze über armenische Sprache und Litteratur» վերնագիրը: Շերէր խօսելով այն անգնահատելի ծառայութիւնների մասին, որ մատուցել են Վիէննայի և Վենեցիայի Մխիթարեանները հայոց ազգին և գրականութեանը, մի կարճ տեսութիւն էլ անում է հայոց լեզուի և գրականութեան պատմական զարգացման մասին և աւելացնում է, որ հայերը, Փոքր-Ասիայի միակ կենդանի մնացած հնադարեան ազգ են, որը հպարտութեամբ կարող է նայել իր 3000 տարվայ պատմական անցեալի վրա:

—

Թավրիզից «Тифл. Листокъ» լրագրին հեռագրում են դեկտեմբերի 7-ից. «Այսօր այստեղ տեղեկութիւն է ստացվել՝ երէկ կէսօրին Աղերբէյջանի շրջակայ գիւղերում տեղի ունեցած անկարգութիւնների մասին: Ոստիկանութիւնը չը կարողացաւ խաղաղացնել ամբոխը և զինուորական ոյժ հարկաւորվեց: Սպանված են մօտ 14 պարսիկներ:»

—

Էրզրումից «Тифл. Листокъ» լրագրին հեռագրում են դեկտեմբերի 6-ին. «Ոստիկանութեան ձեռք առած միջոցների շնորհով հայերի կողոպտումների, և առհասարակ քուրդերի ձեռքից հայերի կրած ճնշումների դէպքերը համեմատաբար պակասեցան, իսկ վերջին երկու շաբաթվայ ընթացքում մինչև անգամ սպանութեան ոչ մի դէպք չէ եղել: Այսօր այստեղ, բացի դրանից, Բ. Դռնից տեղեկութիւն է ստացվել, որ պատրիարք Աշրգեանի միջամտութեան շնորհով թիւրքաց կառավարութիւնը թոյլատրեց ասիական Թիւրքիայի դպրոցներում հայոց լեզուի ազատ դասաւանութիւնը: Անկարգութիւնների ժամանակ փակված մի քանի հայ դպրոցները կրկին կը բացվեն:»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ պ. Առաքել Ծատուրեանց այս ուսումնական տարվայ սկզբից յանձն առաւ մեր բանաստեղծ Բաֆայէլ Պատկանեանի որդկերանցից մինին, որը սովորում է Բագուի ըէալական դպրոցում՝ իր հաշուով պահել, մինչև որ երիտասարդը կաւարտէ իր ուսումը: Պ. Ծատուրեանին ճանաչողները քաջայոյս են, աւելացնում է մեր թղթակիցը, որ երբ երիտասարդը իր ուսումը կաւարտէ միջնակարգ դպրոցում, պ. Ծատուրեան դարձեալ միջոց կը տայ բանաստեղծի որդուն իր ուսումը շարունակելու և բարձրագոյն դպրոցում:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, որ այդ քաղաքի հայ թատրոնասէրների խումբը պատրաստվում է ներկայացնել «Ռուզան» դրամատ: Թղթակիցը խորհուրդ է տալիս թատրոնասէրներին զգուշութեամբ ընտրութիւն անել դերակատարների մէջ և ոչ թէ յանձնել այս ու այն պարոնին կամ օրիորդին դերեր, որոնց կատարելը նրանց ոյժերից վեր է:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, «Յովհ. Արաբաջեանի ռուսերէնից թարգմանած «Մեծ քոյրը» վերնագրով գրքոյկի լեզուն վերին աստիճանի անմշակ ու անհարթ է: Աջող կերպով մի որ և է գրուածք թարգմանելու համար, բաւական չէ բառարան ունենալ, այլ հարկաւոր է կատարելապէս տիրապետել համ այն օտար լեզուին, որից մարդը թարգմանում է, համ էլ իր մայրենի գրական լեզուին: Սակայն ինչքան էլ կրկնէք այդ ճշմարտութիւնը, մեր թարգմանիչները չեն խրատվում և անպատճառ ուզում են իրանց ազգանունը մի որ և է գրքոյկի ճակատին տպված տեսնել, չը նայելով որ ոչ քնագրի լեզուն, ոչ էլ հայերէնը այն չափով գիտեն, որ կարողանան մի որ և է թարգմանութեան ձեռնարկել:»

—

ԱԿԿԵՐՄԱՆ քաղաքից մեզ գրում են. «Այս տարի խաղողի բերքը շատ անաջող էր. այն այգին, որը անցեալ տարի տուել էր, դիցուք, 900 պուդ խաղող, այս տարի միայն 450 պուդ է տուել: Բայց գինը նոյնն է. խաղողի պուդն արժէ այժմ 70—75 կոպէկ: Իսկ գինու վեդրօն արժէ 1 ռուբլուց մինչև 1 ռուբլի 15 կոպէկ: Վաչխառուները ամեն կերպ աշխատում են, որ գինու գինը սովորականից չը բարձրանայ:»

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Մտադրվելով մի հետազօտութիւն անել մեր երկրի թէ հայ և թէ օտարազգի ազգաբնակութեան մէջ պահպանված մնոտիապաշտութիւնների և նախապաշարմունքների մասին, խնդրում եմ մեր գաւառական բանիմացներին և զլխաւորապէս բժիշկներին, համալսարանականներին, քահանաներին և ուսուցիչներին՝ տեղեկութիւններ հաղորդել ինձ իրանց երկրում գոյութիւն ունեցող՝ հմայութիւնների, կախարդութիւնների, աչքակապութիւնների,

---

Թեան կողմից բողոքներ ուղղված մեր մամուլի, մեր պարբերական գրականութեան հասցէին:

Մենք այսօր ունենք, որպէս քաղաքային, գաւառական, նոյնպէս և գիւղական ինտելիգենցիա, որը տարին տասն երկու ամիս ապրում է մեր ժողովրդի մէջ, միշտ ականատես է նրա կեանքին, որը միշտ միջոց ունի ուսումնասիրել, դիտել, հետազօտել այդ կեանքը և պարբերաբար տալ դրա նկարագիրը մեր մամուլին, մեր լրագրութեանը: Մեր պարբերական լրագրութիւնը ժողովրդի բոլոր խաւերում ունի թղթակիցների, աշխատակիցների մի ստուար կօնտինգէնտ, սակայն այսօր մեր լրագրութիւնը, մեր մամուլն աղքատ է նիւթով, տաղտկալի, սառը, աղքատ բովանդակութիւնով, հետաքրքրութիւնով: Բացում էք մեր թերթերը և այնտեղ, բացի հոդաբարձական, երեցփոխանական, հանդիսագրական և մէտէորոլոգիական տեղեկութիւններից ուրիշ շատ քիչ լուրջ բան էք գտնում գրված մեր գաւառում, ժողովրդի մէջ ապրող, գործող թղթակիցների կողմից, որոնց վրա ծանրանում է ժողովրդի կեանքի դիտողութեան, ուսումնասիրութեան, նրա միջի թանդագին գանձերը ժողովելու և ապա դրանց մամուլին տալու բարոյական պարտականութիւնը: Մեր ժողովրդի կեանքը հարուստ է, իսկ մեր մամուլը աղքատ է, որովհետև այդ երկուսի մէջ ընկնող, դրանց կապող, միացնող տարրը՝ ինտելիգենցիան չէ կատարում ճշդութեամբ իր պարտքը, անտարբեր է և փառասէր: Ցեանել իր յօդուածի տակ իր անունը և ազգանունը տպագրված լաւ բան է, դա շոյում է մեր թղթակիցների փառասիրութիւնը, բայց նոյն յօդուածների մէջ ոչինչ չը գտնել, բացի խաբարբղանութիւններից, մանր մունր, ոչ մի միաք և նշանակութիւն չունեցող լուրերից, դա կարծեմ, աւելի քան յանցանք է մեր հարուստ և հետաքրքիր ժողովրդական կեանքի մէջ գտնվող թղթակիցների կողմից: Իսկ խմբագրութիւնից պահանջել այդ բոլորը՝ աւելի քան անմտութիւն է. առանց այն էլ մեր խմբագիրների պատասխանատուութիւնը մեծ է և գործը ծանր: Նոյն փափուկ խնդրի մասին կարդացինք վերջերումս «Մշակի» 128 №-ի մէջ, «Նիւթեր հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար» վերնագրով պ. Ս. Ղօրղանեանցի գեղեցիկ յօդուածը, որի մէջ յարգելի յօդուածագիրը շատ ճիշդ կերպով նկատում է, որ «մեր ազգագրութեան, մեր երկրի ֆլօրա և ֆաունայի մասին մենք գրեթէ ոչինչ տեղեկութիւն չենք ստանում. պարբերական գրականութեան մէջ մեր գաւառների, մեր ժողովրդական ստեղծագործութիւնը, մեր ժողովրդական էպօսը, մեր պարերն ու խաղերը, մեր սովորութիւնները, մեր հայեացքները, մեր ճաշակը, մեր գաւառական առանձնայատկութիւնները, այնքան քիչ են գնահատված, որ մենք գրեթէ ոչինչ որոշ բան չունենք այդ բոլորի մասին...» Այո, գրեթէ մենք ոչինչ չունենք, որչափ դա ցաւալի է, նոյնքան էլ դա իրողութիւն է: Ահա տասն և ինն տարի է, որ «Մշակը» նոյնն է կրկնում...

Այժմ անցնենք մի խնդրի, որը և տեղիք տուեց մեզ ակամայից այսքան երկար կանգնելու մեր մամուլի այժմեան դրութեան մասին:

Ցայտնի է, որ, որպէս մասնաւոր անհատի, նոյնպէս և ամբողջ մէկ ժողովրդի, ազգի և նոյն իսկ ողջ մարդկութեան կեանքում, նոյնանման պատճառները, նոյնանման հետևանքներ են առաջ բերում: Մի անհատ կամ անհատներից բաղկացած մի հասարակութիւն միայն այն ժամանակ կարող է ազատվել իր այս կամ այն պակասութիւններից, հիւանդութիւնից, երբ նախ լաւ ուսումնասիրվում են այն պատճառները, որոնք առաջացրել են այս կամ այն պակասութիւնը, հիւանդութիւնը կամ դրութիւնը և ապա միջոցներ են ձեռք առնվում դրանց դէմ կռուելու, դրանց առաջն առնելու, դրանց բժշկելու համար: Բժիշկը նախ և առաջ ուսումնասիրում է իր հիւանդի օրգանիզմը, նրա հիւանդութիւնը և ապա թէ ձեռք է առնում նրանց բժշկել: Հրապարակագրողը, պուբլիցիստը ամենից առաջ հետազօտում, ուսումնասիրում է իրան զբաղեցնող հասարակութեան կեանքը, նրա բոլոր լաւ և վատ կողմերով, և ապա թէ առաջարկում է այն միջոցները, որոնցով կարելի է ուղղել հիւանդ հասարակութիւնը: Գրականութեան գրեթէ բոլոր տիպերը մեզ երկու որոշ պատկերների խումբ են ներկայացնում. մարդը որպէս է և որպէս պէտք է նա լինի. այսինքն իրական մարդ և իդէալական, ցանկալի մարդ: Նոյն սիստեմը գործ է դրվում համարեա թէ բոլոր գիտութիւնների, արհեստների մէջ: Ա՛հա ամենահասարակ և հիմնական միջոց բժշկելու, որպէս առանձին անհատի, նոյնպէս և ամբողջ հասարակութեան հիւանդութիւնների: Ճշմարիտ գիւղատնտեսը միշտ կաղմած ունի իր մէջ գիւղատնտեսութեան իդէալը, որին աշխատում է հասցնել կամ գոնէ մօտեցնել իր խնամքին յանձնված կալուածը անասուններով և միւս պարագաներով:

Այժմ անցնելով մեր ժողովրդին, մեր երկրին, բոլորիս համար պարզ է, որ նրա համար եւրոպական այժմեան լուսաւորութիւնը, նրա հասարակական, բարոյական, քաղաքական և տնտեսական կեանքը կարող է շատ և շատ բաներում իդէալ համարվել, որին հասնելը, կամ գոնէ մօտենալը կը լինի մեր երկրի համար կատարեալ երջանկութիւն, և որը պէտք է լինի, մեր բոլորիս, ժողովրդի ճշմարիտ բարեկամներիս նպատակը: Դիտել այդ կեանքը, ուսումնասիրել այն ատիճանները, որոնցով բարձրանալով այսօր հասել է եւրոպական հասարակութիւնը իր ներկայ բարձրութեանը և բաղդաւորութեանը, և մեր տեսածն ու ուսումնասիրածը տալ մեր ժողովրդին, ծանօթացնել նրան այդ լուսաւոր կեանքի հետ, որի մասին շատ մութ և աղօտ հասկացողութիւն ունի մեր ժողովրդի մեծագոյն մասը և ապա առաջարկել այդ բոլորը նրանց, յարմարեցնելով մեր երկրի տեղական պայմաններին,

րի, հրաչքների, գուշակութիւնների, ուխտագնացութիւնների, տեսիլքների մասին, և այլն։ Պէտք է մանրամասնաբար գրեն, գլխաւորապէս օրինակներով։ Կարևոր տեղեկութիւններ հաղորդողների ազգանունները կը յիշվեն աշխատանքիս մէջ, որից մի մի օրինակ կուղարկվի իրանց։ Դիմել կարելի է ինձ հետևեալ հասցէով. Тифлисъ, доктору медицины В. М. Арцруни.›

—

Արտասահմանում հրատարակվող հայ թերթերը վերջին ժամանակներս կրկին փոխադարձ թշնամութեան անզուսպ նշաններ են ցոյց տալիս։ Գաղափարի և ուղղութեան համար կռիւ մղելը՝ մենք համարում ենք պատուաբեր ամեն մի օրինաւոր օրգանի համար, բայց երբ այդ կռից անձնական յարաբերութիւնների հոտ է գալիս,—դա պատուաբեր չէ։ Այդ տարրական ճշմարտութիւնը աւելորդ չենք համարում յիշեցնել արտասահմանի հայ օրգաններին, որոնք ամեն հարցի մասին գրելու մեծ դիւրութիւն ունեն։

—

Արտասահմանի հայոց մամուլը չարունակում է կատաղի կերպով յարձակվել Խորէն Պատրիարք Աշրդեանի վրա՝ նրա բռնած ընթացքի համար։

—

Պետերբուրգից եկած տեղեկութիւններին նայելով՝ սովեալների օգտին կազմված վիճակախաղի տոմսերը մեծ արագութեամբ տարածվեցան։ Եթէ վիճակախաղի տոմսերի թիւը երկու անգամ աւելի լինէր,—անկասկած տոմսակները դարձեալ կառնվէին։

—

Թիֆլիսի ռուսաց խմբի մէջ կայ մի հայ դերասան, որը յայտնի է Գրօմօվ ազգանունով։ Դեկտեմբերի 10-ին, երեքշաբթի լինելու է պ. Գրօմօվի բենէֆիսը։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Վանքի ամբողջ տնտեսական գրութիւնը այս րոպէիս վերաքննութեան է ենթարկվում. մի շաբաթ առաջ եկաւ այստեղ տնտեսագէտ երիտասարդ պ. Արշակ Ճարակեան, որը դրացի պ. Աթաբէկեանի կալուածքի կառավարիչ է։ Նրան յանձնված է վանքի հաշիւների վերաստուգումը։ Մեծ դեղծումներ են երևան եկել, այնպէս որ մի քանի մանր ծառայողներ արձակված են արդէն, ի միջի այլոց գլխաւոր պարտիզպանը, որի օրով անյայտ պատճառներով վանքապատկան վաղը համարեա չէր տալիս խաղող։ Գործերի նախկին կառավարութեան մէջ օրից օր նոր և նոր խարդախութիւններ են բացվում։ Արդէն կաթողիկոսի կենդանութեան օրով միաբանների մէջ առաջարկողներ եղան, որ վանքը այլ ևս իր ձեռն ու կովը, իր մալը չը պահէ, քանի որ դրանից, բացի ծախսերից և անթիւ հոգսերից, ոչինչ եկամուտ չէր երևում։›

—

Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում «Մշակի» ներկայ համարում տպված, Բագուից, խմբագրին գրված Հայուհու նամակի վրա։ Ցարգելի Հայուհին ուղարկում է մեզ 3 ռուբլի յօգուտ Բաֆայէլ Պատկանեանի որդու, որը սովորում է Թիֆլիսի Արհեստաւորաց դպրոցում և խոստանում է ամսէ ամիս նոյն գումարը հասցնել մեզ յիշեալ երիտասարդի օգտին։

—

Դեկտեմբերի 13-ից սկսած՝ Անդրկովկասեան երկաթուղու գնացքների երթևեկութեան կարգը փոխվում է։ Մեր լրագրում տպված Տեղեկացոյցից ընթերցողը կը ծանօթանայ գնացքների երթևեկութեան ժամանակամիջոցների հետ։

—

Շնորհակալութեամբ ստացանք ԷՋՄԻԱԾՆԻՑ փոքրիկ դիրքով տպված և կազմված «Աւետարանը։» Կազմի հետ միասին Աւետարանն արժէ 70 կոպէկ։ Աւետարանը տպված է դրաբար լեզուով։ Ե՞րբ վերջապէս Էջմիածինը կը տպագրէ Աւետարանն աշխարհաբար լեզուով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԻԱ

—

Այս օրերս Սոֆիայից գրում են «N. W. Abendblatt» լրագրին, ազգային ժողովի անդամների գաղտնի նիստի ժամանակ, հետևեալ կերպով նկարագրեց Բոլգարիայի դրութիւնը.

«Մեր յարաբերութիւնները չատ լաւ են Աւստրօ-Ունգարիայի, Գերմանիայի, Անգլիայի և Իտալիայի հետ, և վերոյիշեալ պետութիւնները ղեկավարող պետական մարդկանց վերջերս արտասանած ճառերից մենք այն համոզմունքը կազմեցինք, որ այդ պետութիւնները բարեկամաբար են վերաբերվում դէպի մեզ։ Մինչև անգամ Թիւրքիան մեզ հետ լաւ է և այդ իր բարեկամութիւնը նորերս ապացուցեց նրանով, որ ուշադրութեան առաւ Թիւրքիայի սահմաններում ապրող մեր եղբայրների զպրոցական և եկեղեցական գործերի առիթով մեր արած գանգատները։ Ռուսաստանից ներկայումս մենք վախենալու առիթ չունենք, որովհետև սովի պատճառով նա բաւական չատ գործ ունի իր երկրում։ Բացի դրանից, ես կարծում եմ, որ Ռուսաստանից մեզ կարող է իրապէս պաշտպանել երեքպետեան զօրեղ դաշնակցութիւնը։ Ես նոյնպէս կարծում եմ, որ Ռումինիան, որի հետ մենք չատ բարեկամական յարաբերութիւններ ունենք, ստիպված կը լինի, մեզանից էլ աւելի պաշտպանվել Ռուսաստանի արշաւանքի դէմ և եթէ այդ կը պատահի, մենք մինչև անգամ աւելի էլ կը շահվենք։ Սերբիայի մասին նոյնը չեմ կարող ասել, որովհետև նա զինաւորվում է մեզ վրա յարձակվելու նպատակով։ Այնու ամենայնիւ, այդ կողմից ևս մենք վախենալու ոչինչ չունենք այն պատճառով, որ սերբիացիները փող չեն կարող գտնել, այն ինչ մեր զօրքը կատարելապէս զինաւորված է»։

Խօսելով պրինց Կոբուրգին բոլգարական իշխան ճանաչելու հարցի մասին, Ստամբուլով ասեց, որ բոլգարական ժողովրդի այդ բուռն ցանկութիւնը կիրագործվի ամենաուշը մէկ և կէս տարուց յետոյ։ Երկրի ֆինանսական դրութեան մասին ժողովի անդամները իմացան բոլգարական առաջին մինիստրի բերանից, որ նա, այսինքն բոլգարական ֆինանսական դրութիւնը, չատ բաւարար վիճակի մէջ է, որովհետև այս տարի տասանորդը սպասածից տաս միլիոն ֆրանկ աւելի եկամուտ տուեց, նոյնպէս արծաթէ նոր դրամ կտրելուց յետոյ պետական գանձարանը երկու միլիոն ֆրանկ աւելի եկամուտ ստացաւ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Բէյտէրի գործակալութիւնը» հաղորդում է, որ լորդ Դիւֆէրին Պարիզի անգլիական դեսպան է նշանակվում։

—«Daily Chronicle» լրագիրը հաղորդում է, որ իբր թէ մտադրութիւն կայ Կլարանեան դքսին (Ուէլսի իշխանի որդուն) Իրլանդիայի փոխարքայ նշանակել։

—Վիէննայում ստացված տեղեկութիւններին համեմատ, արնաւանների աւազակութիւնները և գաղանութիւնները սաստկանում են։

—Բերլինից հեռագրում են, որ իշխան Բիսմարկի և կոմս Վալդերզէի տեսակցութեան հետևանքն այն եղաւ, որ կոմս Վալդերզէ խորհուրդ տուեց իշխան Բիսմարկին հրաժարվել Բերլին գնալու դիտաւորութիւնից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 դեկտեմբերի։ Մոսկվայի դատաստանական պալատի պրոկուրոր Մուրավեով նշանակված է կառավարիչ սենատի քրէական վճռաբեկ ատեանի օրեր-պրոկուրոր։—Թագաժառանգ Ցեսարեվիչի նախագահութեան ներքոյ եղող առանձին մասնաժողովի երկրորդ նիստը զբաղվեց գլխաւորապէս՝ Կազանի և Սամարայի նահանգների մի քանի գաւառների ամենից չատ կարօտ ազգաբնակութեան նպաստելու խնդրով։ Մասնաժողովի կարգադրութեան յանձնվեցան 5/12 նուիրատուութիւններ՝ 133,845 ռուբլու։—Մեծ իշխաններ Գէորգ, Աղէքսանդր և Սերգի Միխայլովիչները նուիրեցին 105 հազար ռուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 դեկտեմբերի։ «Гражданинъ» լրագիրը լսել է, որ Թագաժառանգ Ցեսարեվիչի նախագահութեան ներքոյ գտնվող առանձին մասնաժողովի կողմից՝ Կազանի նահանգն է ուղևորվում կամերգեր Նեչաեվ-Մալցեվ լիազօրութիւն ունենալով բարեգործութիւններ անելու. ներքին գործերի մինիստրութեան կողմից Պերմի նահանգն է ուղարկվում հաց բաժանելու վերաբերեալ կարգադրութիւններ անելու նպատակով՝ իշխան Դոլգորուկով, իսկ Կազանի նահանգը—վիճակագրական բաժնի կառավարիչ Տրօյնիցկի։

ԲԵՐԼԻՆ, 7 դեկտեմբերի։ Ռէյխստագը ընդունեց Գերմանիայի առևտրական պայմանագիրը Աւստրիայի, Իտալիայի և Բելգիայի հետ։ Կայսրը դրա համար կապրիվիին կոմսի տիտղոս շնորհեց, և նրա կենացը խմելով ասեց. «Ժամանակակիցների և ապագայ սերնդի համար առևտրական պայմանագրերը պատմական խաչոր դէպքեր են. ոչ միայն մեր հայրենիքը, այլ և ուրիշ երկրների միլիոնաւոր բնակիչները, որոնք մտնում են մաքսային դաշնակցութեան մէջ, կօրհնեն այս օրը։»

ահա այն բարձր, ճշմարիտ և օգտաւէտ գործունէութիւնը, որը ծանրանում է այն բոլոր անհատների վրա, որոնք բաղդ ունեն այսօր լինել այդ մեզ համար իդէալական երկրում։ Մեր ո՞ր դասակարգն է այժմ օգտվում այդ բաղդից,—եթէ ոչ մեր արտասահմանեան ուսանողութիւնը, որն ամենից աւելի միջոց ունի այդ անելու. ո՞ւմ վրա է դրված այդ քաղցր պարտականութիւնը, եթէ ոչ մեր հայ ուսանողութեան այն մասի, որն աւելի մօտիկ է եւրոպական ճշմարիտ քաղաքակրթութեանը։

Սխալված չեմ լինի, եթէ ասեմ, որ այսօր արտասահմանեան բարձրագոյն դպրոցներում կան աւելի քան 120—150 հայ ուսանողներ, որոնք գիտութեան տաճարներում լսում են ճշմարիտ լուսաւորութեան քարոզը, որոնք գիտութեան վճիտ աղբիւրներից խմում են կենդանարար ջուրը, որոնք այսօր բաղդ ունեն այնքան մօտիկ կանգնել եւրոպական ճշմարիտ լուսաւորութեանը, քաղաքակրթութեանը։ Եւ մի՞թէ մեր այդ ուսանողութիւնը, որը այդքան մօտիկ է մեր երկրի իդէալին, անկարող է գործով մասնակցել, օգտաւէտ լինել մեր հասարակութեանը իր տեղից։ Մի՞թէ մեր այդ ուսանողութիւնը չէ կամենում թեթևացնել այն ահագին բեռը և պահանջները, որ դրված են այսօր մեր գրականութեան, մեր մամուլի ղեկավարների վրա, ուսումնասիրելով իրանց շրջապատող կեանքը, դիտելով զանազան երևոյթներ իրանց շուրջը՝ միացնել դրանց և ապա թէ տալ մամուլին կամ թէ նոյն իսկ իրանց ստացած դիտութիւնից, մասնագիտութիւնից բաժին հանել ընթերցող տարրին։ Որչափ լայն ուսումնասիրութեան ասպարէզ է բացվում մեր արտասահմանեան ուսանողութեան առջև այստեղ Եւրոպայում, ուր նա ամեն միջոց ունի այդ անելու. որչափ օգտաւէտ բան կարող է սովորել մեր ժողովուրդը այդ դիտողութիւնների և ուսումնասիրութիւնների բարեխիղճ արդիւնքից... Թող մասնակցի մեր ուսանողութիւնը մեր գրականութեան մէջ և նա այնտեղ մացրած կը լինի մի նոր, մեծ, օգտաւէտ և առողջարար հոսանք, որի շնորհիւ կաղամեն մասամբ մեր թերթերը միաձևութիւնից, անհետաքրքրութիւնից։ Մի՞թէ մոռանում ենք այն ճշմարիտ բաւականութիւնը, այն յափշտակիչ հետաքրքրութիւնը, որով կարդում էին մեզնում պարոն Գրիգոր Արծրունու «Մի տարի Շվէյցարիայում» վերնագրող մի շարք յօդուածները։ Եւ մեր ժողովրդի ո՞ր դասակարգը չէր կարդում այդ յօդուածները, միշտ նոր և նոր օգուտներ, տեղեկութիւններ քաղելով այն կեանքից, որը այնքան հեռու է և անծանօթ է նրա համար։ Եւ ինչ էին պ. Գրիգոր Արծրունու այդ յօդուածները, եթէ ոչ նրա մի քանի ամսվայ շվէյցարական կեանքի ուսումնասիրութեան, դիտողութեան արդիւնք։ Դեռ ևս չարունակվում էին այդ յօդուածները տպագրվել «Մշակի» մէջ, երբ նոյնը արտատպեց մեր Կ. Պոլսի մամուլը։ Եւ մի՞թէ մենք ևս, արտասահմանեան հայ ուսանողներս չենք կարող նոյնն անել, ուսումնասիրել եւրոպական հասարակութեան ուսանելի կեանքը, դիտել մեր շուրջը կատարվող զանազան գեղեցիկ երևոյթները, հետաքրքրվել դրանց պատճառներով, որոնց պատասխանը այստեղ Եւրոպայում միշտ կարելի է գտնել, և մեր տպաւորութիւնները, մեր դիտողութիւնների արդիւնքը հաղորդել մեր պարբերական մամուլին։ Այո, դա կը լինի մի նոր հոսանք, մի ճշմարիտ գեղեցիկ գործ մեր կողմից մատուցած մեր մամուլին և մի և նոյն ժամանակ մենք տուած կը լինէինք ուսանելի և օգտաւէտ նիւթ մեր ժողովրդի ընթերցանութեան պահանջ զգացող կարդացող դասակարգին, ծանօթացնելով նրան այն կեանքի հետ, որով պէտք է մարդիկ ապրեն, բայց որով մերոնք չեն ապրում։ Եւ այդ յօդուածները, այդ նկարագրութիւնները կարող են ևս առաւել հետաքրքիր լինել հէնց այն պատճառով, որ արտասահմանեան մեր ուսանողութիւնը Ռուսաստանի նման խմբված չէ մի քանի քաղաքներում, ինչպէս Պետերբուրգում և Մոսկվայում, այլ նա ցրված է Եւրոպայի զանազան պետութիւնների և երկիրների մէջ։ Մենք ունենք բաւական թիւով ուսանողներ Ֆրանսիայում՝ Պարիզում և Մոնպելիէում. Գերմանիայում՝ Լէյպցիգում, Հալլէում, Հէյդելբերգում, Հոհենհէյմում, Շվէյցարիայում՝ Ժընէվում. Ցիւրիխում. Աւստրիայում՝ Վիէննայում և ուրիշ չատ համալսարանական կամ բարձրագոյն մասնագիտական հաստատութիւնների մէջ։

Եթէ մեր արտասահմանեան ուսանողութեան գոնէ մի 20—25 % պարբերաբար մասնակցէր մեր մամուլին, ամիսը մէկ կամ երկու անգամ ուղարկելով նիւթեր, իսկ մեր գաւառական թղթակիցները աւելի լրջօրէն վերաբերվէին դէպի իրանց ստանձնած պարտականութիւնը, ուսումնասիրէին մեր մայր երկրում ապրող հարուստ և բազմակողմանի կեանք ունեցող ժողովուրդը և այդ բոլորը մտնէր մեր պարբերական թերթերի մէջ, համարեա կարելի է ասել, որ այն ժամանակ, մեր մամուլը ծառայած կը լինէր իր կոչմանը, մենք կը ճանաչէինք մեզ, մեր իսկական պատկերը, մեր կեանքը և ծանօթացած կը լինէինք նաև մեր հիւանդութիւնների հետ և նրանց բժշկելու միջոցների հետ, երբ կը համեմատէինք մեր կեանքը եւրոպական հասարակութեան երջանիկ կեանքի հետ, իսկ հայ ինտելիգենտ դասակարգը կատարած կը լինէր իր պարտականութիւնը դէպի հասարակութիւնը։

Մենք, պարոններ, արտասահմանեան ընկերակից ուսանողներ, պարտական ենք այդ անելու, քանի որ, հում որ չատ է տուած, նրանից էլ չատ է պահանջվում. իսկ մեզ չատ չատ է տուած։ Մենք լուսաւորեալ աշխարհումն ենք, ճաշակում ենք մարդկային հանճարի, ճգանց, ստեղծագործութիւնների պտուղներից, մենք հաղար և մի տեսակ բարոյական, էստետիական բաւականութիւններ ենք վայելում, մեր առջև բաց են գիտութեան տաճարների դռները, գրադարաններ, մուզէումներ, թանգարաններ, զանազան կաբինետներ, գեղարուեստ, մամուլ և այլն և այլն, այն ինչ մեր ժողովուրդը չունի կարդալու բան, նա կարդալ է ցանկանում, սակայն չատ քիչ բան է գտնվում, որը նրա մտքին ու սրտին մի նիւթ տուած լինէր։

Թող չը քաշվենք, որ հայերէն, մեր մայրենի լեզուով չատ էլ լաւ և անսխալ չենք գրում, տանք միայն նիւթեր, յուսով ենք, որ մեր խմբագրութիւնները, իրանք կուղղեն, կը մշակեն, կը կոկեն մեր անտաշ ոճը, և ուրախութեամբ կընդունեն մեր նուիրաբերութիւնները, մեր գործելու բարի ցանկութիւնները և կը բացեն իրանց թերթերը մեր առջև։ Ահա մի ամսից յետոյ գալիս է նոր տարին, մեր կեանքը մտնում է մէկ նոր շրջանի մէջ, մացնենք մենք, որ ժողովրդի հասկացող դասակարգ ենք, այդ նոր կեանքի մէջ նոր հոսանք, նոր նիւթ, նոր պաշար։

Այսպէս ուրեմն, մեծայոյս եմ, որ իմ այս բարի հրաւէրս արձագանք կը գտնի արտասահմանեան հայ ուսանողութեան ամեն լաւ, բարձր, օգտաւէտ նպատակների զգայուն սրտերի մէջ և առաջիկայ նոր տարում կը սկսենք միացած ոյժերով պարբերաբար մասնակցել մեր մամուլին։ Մեր Ռուսաստանում, Պետերբուրգի, Մոսկվայի, և Օդէսայի ուսանողութիւնը բաւական մեծ օգուտներ է տուել և տալիս մեր գրականութեանը, գցելով իր գրականական վաստակների լումայի աղգային մտաւոր գանձարանի մէջ, գցենք մենք ևս մեր լումայի հեռաւոր և լուսաւոր Եւրոպայից մարդկութեան մտաւոր և բարոյական մկրտութեան աւազանի մէջ։

Իսկ գալով մեր մայր երկրի ինտելիգենցիային և լրագրական թղթակիցներին, ցանկանք և յուսանք, որ նրանք առաջիկայ նոր տարուց աւելի լրջօրէն կը զբաղվեն իրանց վրա վերցրած լրագրական թղթակցի ծանր պարտականութեամբ, տալով ընթերցող հասարակութեանը մեր երկրի մտաւոր, բարոյական և տնտեսական կեանքի ճիշդ ուսումնասիրութեան պատկերը և այդպիսով վերջ տուած կը լինեն լրագրական ճանճրալի և միակերպ գրութիւններին։

Հօհէնհէյմ. Ա. Աթանասեան

ՎԻԵՆՆԱ, 7 դեկտեմբերի։ Բէյխարատի մաքսային յանձնաժողովը ընդունեց առևտրական պայմանագիրը, Գերմանիայի, Իտալիայի և Բելգիայի հետ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 դեկտեմբերի։ Բարձրագոյն հրամայված է սովատանջ տեղերում սկսել հասարակական աշխատանքներ և այդ հարցի վերաբերմամբ կազմակերպել առանձին խորհուրդ, նախագահութեամբ ոստեական դեպարտամենտի նախագահ Աբազայի և մասնակցութեամբ՝ ներքին գործերի և ֆինանսների մինիստրների և պետական կօնտրոլեորի. գեներալ Աննենկով նշանակված է այդ աշխատանքների կարգադրիչ։— Հաց և սերմացու մատակարարելու համար հոկտեմբերին և նոյեմբերին բաց է թողնված 23,957,834 բուբլի. նոյեմբերին ծախսված է 23,917,765 բուբլի, առաջուց որոշած 31,851,500 բուբլու հետ։ Դրանցից 20 նահանգներում 11,957,034 ր. ծախսված է աշնանացանի վրա, 43,812,231 ր. նշանակված է հաց և գարնանացանի սերմ առնելու համար։ Ձեռք է բերված 25,470,139 պուդ հացահատիկ։ Նպատակ տրվում է հացով. Տօբոլսկի նահանգում փողով։—Նոյեմբերի 20-ին Բարձրագոյն հրամայված է բաց թողնել 10 միլիոն բուբլի, աշխատանքների համար։

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական գնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է	9 ժ. 45 ր. առաւ.
ԹԻՖԼԻՍ հասնում է	9 » 52 » երեկ.

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է	9 ժ. 30 ր. առաւ.
ԲԱԹՈՒՄ հասնում է	9 » 45 » երեկ.

Պօստային գնացքներ Բաթումի և Բագուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է	11 ժ. 25 ր. երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է	12 » 25 » ցերեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է	1 » 20 » ցերեկ.
ԲԱԳՈՒ հասնում է	7 » 30 » առաւ.

№ 4

ԲԱԳՈՒԻՑ մեկնում է	11 ժ. 10 ր. գիշեր.
ԹԻՖԼԻՍ հասնում է	5 » 50 » երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է	6 » 50 » երեկ.
ԲԱԹՈՒՄ հասնում է	8 » 15 » առաւ.

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է	9 ժ. 20 ր. երեկ.
ԳԱՆՁԱԿ հասնում է	10 » 10 » առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ մեկնում է	7 » 35 » երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է	7 » 30 » առաւ.

—

ՌՈՒՍԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՓԵՆԱՒԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 8 ժամին երեկոյեան, շրջական ըէյսով, Բաթումից դէպի Օդէսա.

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 ժամին երեկոյեան նմանապէս։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ժամին երեկոյեան, Բաթումից դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿՈՒՄ Է ՄԱՍԱԺՈՎ և բժշկական

ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ, բժիշկների զեկավարութեան տակ։ Աղքատներին բժշկում է ձրիապէս։ Նիկոլաեվսկայա փողոց, տուն № 16.

1—1 ԽՕՍՐՕՎԵԱՆՑ



XIV годъ. 1892. годъ XIV.

художественный и юмористическій журналъ карикатуръ, 52 №№ въ краскахъ.

Съ пересылкой и доставкой. Годъ . . . . . 7 руб. 6 мѣсяц. . . . . 4 » За границу . . . . . 10 »

Безъ пересылки и доставки. Годъ . . . . . 6 р. 50 к. 6 мѣсяц. . . . . 3 » 50 » Разсрочка по соглашенію.

БЕЗПЛАТНАЯ ПРЕМІЯ ДЛЯ ГОДОВЫХЪ ПОДПИСЧИКОВЪ

РОСКОШНЫЙ АЛЬБОМЪ

„Новгородская Былина О БОГАТОМЪ ГОСТѢ ТЕРЕНТЬИЩЕ"

Текстъ, по КИРШѢ ДАНИЛОВУ, облаженъ

М. О. МИКѢШИНЫМЪ,

СО МНОЖЕСТВОМЪ ЕГО ОРИГИНАЛЬНЫХЪ РИСУНКОВЪ.

Рисунки будутъ воспроизведены слѣдующими способами: 1) переводомъ оригинала рисунка съ химическаго торшона на литографскій камень, 2) по фото-цинкографіи, 3) по фотолитографіи, 4) акварельною печатью, 5) хромо-литографіею.

Былина повѣствуетъ о томъ, что такое, подъ видомъ Недуга-Утина, томило молоду жену Гостя Терентія и чѣмъ была излѣчена эта болѣзнь къ общему благополучію.

Былина эта можетъ служить образчикомъ безобиднаго русскаго народнаго юмора.

За перес. преміи заказн. посылк. гг. иногородн. подписч. благоволятъ выслать 60 к. (можно почт. марк.).

Адресъ редакціи: СПБ., Троицкая, 10. За редактора—издатель Р. Голике.

(4 мѣс. 2 мѣс.) 1—5

ՍԱՐՊԻՆԿԱ ԱՍՎԱԾ ՀԻՒՍՈՒԱԾՔ

„Ա. ԲԷՆԴԷՐ, ՈՐԴԻՆԵՐՈՎ, Ա. ՍՏԵՓԱՆՈՎ ԵՒ Վ. ԲԷՆԴԷՐ"

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՍԱՐԱՏՕՎԻՑ

Ցայտնում է Թիֆլիսի պատուելի հասարակութեանը, որ բաց է անում յատուկ մագազին սեփական պատրաստութեան սարպինկա ասված հիւսուածքը, աղլուխները և բամբակեայ զուլպաների գործուածները Թիֆլիսում ծախելու համար։

Սարպինկա մի հիւսուածք է, որը պատրաստվում է ձեռքի միջոցով և այդ նիւթից կարող են պատրաստվել կանանց ամենաշքեղ զգեստներ, մանուկների զգեստներ և տղամարդկանց շապիկներ։

Մագազինը գտնվում է Թիֆլիսում, Սօլոլակում, Ազաբաբովի տանը, որտեղ առաջ գտնվում էր Զիլթախովի գրասենեակը։

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԱՍ ՄԱՍ

15—20

Huste-Nicht Gerichtl. geschützt

ՄԻ՞ ՀԱԶԻՐ

Մեղրից և խոտերից պատրաստված մալց-էկստրակտ և կօնֆէտներ

Լ. Գ. ՊԵՏՇ ԵՒ ԸՆԿ. ԲՐԷՍԼԱՈՒԻ ՄԷՋ։

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պրէպարատները չեն պարունակում առողջութեան համար որ և է վնասակար բաղադրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց այդտեղ ծախելը թոյլատրված է։

ԳԻՆԸ. չիշը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կօնֆէտները 30—50 կոպ.։

Գլխաւոր պահեստ Ռուսաստանում

Վ. ԱՈՒԲԻԽԻ մօտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Կոլոկոլնայա 18/19

Վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղագործարաններում և դեղատներում։

3—16 (ամսի 10 և 25)

Միայն ֆաբրիկային այդ մարկա կրելով, վաւեր է համարվում.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1891 թվականի նոյեմբերի 11-ին թիւ 1892 թվականի մարտի 1-ին թիւ 11 տակ հաստատեալ կանոնագրի համաձայն, որպէս զի ամենայն ոք գիտասցի, զի ի գրադարանս քաղաքիս Թիֆլիսի մտանելն ամենայն ոք ազատ է։ Գրադարանս բացեալ է ամենայն օր, զատ զ՝ Կիրակէ և զ՝ տօնս։ Ի գրադարանիս գտանի գրեալ ամենայն կարգեալ գրեանք։ Ի գրադարանիս ընդունեալ են գրեանք ամենայն ազգաց։ Ի գրադարանիս գտանի գրեանք հայերէն, վրացերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլերէն, իտալերէն, հոլանդերէն, դանիերէն, սուեդերէն, նորվեգերէն, լեհերէն, հունարէն, արաբերէն, պարսկերէն, թուրքերէն, ասորերէն, հնդերէն, ճապոներէն, չինարէն։ Ի գրադարանիս գտանի գրեանք ամենայն գիտութեանց։ Ի գրադարանիս գտանի գրեանք հնագոյն ի նորագոյն։ Ի գրադարանիս գտանի գրեանք հանրագիտարանաց, բանաստեղծաց, պատմագրաց, աստուածաբանաց, բանասիրաց, բնագէտաց, բժշկաց, գիտնականաց, ճարտարաց, գրագրաց, ուսուցչաց, ուսանողաց, ազգագրաց, ճանապարհորդաց, ռազմիկաց, նաւաստեաց, գիւղատնտեսաց, ոստիկանաց, դատաւորաց, ազգաբանաց, հանրագրաց, ամենայն արուեստաց։ Ի գրադարանիս գտանի գրեանք ամենայն լեզուաց։ Ի գրադարանիս գտանի գրեանք ամենայն դարուց։ Ի գրադարանիս գտանի գրեանք ամենայն ոճո